

զԱստուծոյն Աստուծոյ», բաւական տարբեր Տիցեանի համաւնման նկարից, որի ընդօրինակութիւնը թանգարանի համար բաւական յաջող նկարել է Արշակ Յետվաճեանը: Լրութեան համար յիշենք նաև մի հատ մեծ վարագոյք գորէն—ասեղնագոյք, որ Գարեգին վարտապետ Յովսէփեանը նորհայազէտի մի հայ գիւղական եկեղեցում գտնելով, հետն առել ըերել էր թագարան:

Յատուկ ուրախութեամբ յիշատակում ենք այն հանգամանքը, որ ամենավերջին օրեւս թանգարանը ճոխացաւ երեք յաջող ընդօրինակութիւններով, որ պատրաստել և նուիրել է երիտասարդ նկարիչ ալ Փ. Թեոլէմէզեանը: Նա գեռ Պարիզից ուղարկել էր Ս. Մատթէոս Աւետարանչի ընդօրինակութիւնը, առնուած Ռեմբրանդի նկարից, ապա ս. Աստուածածնինը ֆրանսիացի Միկեարգի (Miquerid) նկարից և Պարիզի Լուվր թանգարանում գտնուած Տրդատ թագաւորի մարմարիայ արձանի ընդօրինակութիւնը: Այդ արձանը, որ տեղաւորուած է Լուվրի առաջին յարկում, արևելեան արուեստին վերապահուած որահներից մէկում, ներկայացնում է Հայոց թագաւորին արևելեան յատուկ տարագով—գլխին ֆռիւգական գլխարկ, կարճ վերնազգեստ՝ մէջըում գոտաւորուած և նեղ վարդիկ հագած: Թագաւորը հանդարտ կանգնած է աջ ձեռին գաւաղան, իսկ ձախով բռնել է վերնազգեստը: Նկարիչը ըացի արձանից, նրա յետին ֆռնի վրայ նկարել է մի ուրիշ արձան—Միհը աստուածը չոգած մի եղան մէջքին, դանակը խըում է նրա կոկորդը:

Մեսրոպ վարդապետ.

ՏԱՃԿԱՀԱՅՔ *

—Կաթուղիկոսական ընտրութիւն մ' ալ:—Կիլիկիոյ կաթուղիկոսական ընտրութենէն ետքը՝ անհրաժեշտ հարկ եղած է՝ առանց այլ ևս յապազման ձեռնարկել Աղթամաւայ կաթուղի-

*) Կ. Պոլսի թերթից:

կոսական ընտրութեան, վասն զի՞ ամենայալնի է թէ՝ կելիկիոյ կաթուղիկոսական թեմօրէից Հայոց կրօնական ու կրթական վիճակէն շատ աւելի վատթար է Աղթամարայ կաթողիկոսական թեմօրէից Հայոց կրօնական ու կրթական վիճակը, որոց վրայ յաճախ ծանօթութիւններ հաղորդուած են Պատրիարքարանի և յաճախ նկարագրութիւններ հրատարակուած են լրագրաց միջոցաւ:

Աղթամարայ վիճակին համար արժանաւոր, զործունեայ ողջախոհ կաթուղիկոս մը պէտք է: Այդ կաթուղիկոսութեան յատկացեալ են 20-ի չափ թեմեր՝ 700-ի չափ գիւղաքաղաքներու ու գիւղերով, 35-ի չափ վանքերով: Այդ գիւղաքաղաքաց ու գիւղօրէից մէջ՝ կըսէ նորագոյն տեղեկագրութիւն մը՝ հազիւ 100-ի չափ քահանայ կայ, մեծ մասն տղէտ և հազիւ 30-ի չափ գպրոցներ: մեծագոյն մասն անուամբ միայն: Ֆողովութեղը բարոյապէս ընկած է: ուսման ու կրթութեան անտարբերութիւն, կրօնական գգացմանց սառնութիւն, մայրենի կրօնքն ու եկեղեցին փոխելու հակամիտութիւն, ընտանեկան ոգւոյ ու որբութեան տեղատուութիւն, ամուսնական կապերու քայլայում, ապօքէն կենակցութեան աճումն են: են:

Այս նկարագրութիւնը առաւել հերիք է վիճակին ծանրութիւնը բացատրելու համար, և մեր կողմանէ գիտողութիւններ ընելու պէտք չմնար: Նա՛ր չէ այս վիճակը պէտք եղած կարգադրութիւնը կարի յոյժ յապաղած է: Հարկ է մայրաքաղաքէս կամ գաւառէ մը բանեթուն եկեղեցական մը յտակապէս Աղթամար զրկել կայսերական հրամանաւ և կաթուղիկոսական ընտրութիւն կատարել տալ:

Մաղաքիա ծառայ Յիսուսի Քրիստոսի, սղորմութեամբ Աստուծոյ և շնորհիւ սուրբ Հոգւոյն և կամօք ազգին արքեպիսկոպոս Կոստանդնուպոլոյ և պատրիարք Հայոց Թուրքիոյ:

Գերաշնորհ և Հոգեշնորհ թեմակալ Առաջնորդաց և Տեղապահաց և Փոխանորդաց, Արքանաշնորհ ուխտի քահանայից, պատուարժան գաւառական վարչութեանց, և ամենայն բարեփաշտ ժողովրդոց որ ի սահմանս Պատրիարքութեանս մերոյ, օրհնածայն ողջունիւ սիրոյ յայտ առնեմք:

Հրաման է որբոյ և ուղղափառ եկեղեցւոյս կատարել ամ յամէ յերկրորդ կիւրակէի Հոգեգալստեան զծոն յիշատակաց հիմնարկութեան տերաշէն և տերապահ կաթուղիկէ Մայր եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի, և զհրամանն զոր ընկալաքս յերաշնորհ նախնեաց մերոց, կատարեցաք և մեք յանդ ջերմեռանդն ըղձիք: Երջան հոլովման ժամանակաց հասուցանէ զմեզ յայսի

ամի ի լրումն վեշտասաներորդ հարիւրամեկի յօրէ յորմէ կենդանի նոհատակն և խոստովանող վկայն Քըլիոտոսի Տէք Սուրբ Գրիգորիոս յառաջգիտութեամբ բարեխնամողին Առտուծոյ վերաբերեալ ի վիրապէն՝ վերաբերէր և զմեղ ի հաւատու ճշմարտութեան, և հրաշալի տեսլեանն աղդմամբ շնչնէր սուրբ զխորանն լուսոյ, ուր էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նման եցոյց զվայրն նուիրական։ Արդ մեծագոյնք են յիշտատակք, որք յորելեան ամաց թուարկութեամբ ճոխանան և յատուկ տօնախմբութեանց լինին առիթք, որով և Մէք ըստ հրամանաց հասելոց մեզ յԱստուածաբեալ Առաքելական Մայր Աթոռոյ և յԱթոռակալէ նորին ի սրբազնադոյն կաթուղիոսէն Ամենայն Հայոց՝ հրաւերէր կարդամբ սիրեցեալ դործակցացդ մերոց, վիճակաւոր Առաջնորդաց և Տեղապահաց և Փոխանորդաց, որպէս զի աղդ արասնչիք յամենայն եկեղեցիս որ են ի թեժօրայս առաջնորդութեանդ և հոգեոր պաշտօնէութեանց նոցին և հաւատացեալ ժողովրդոց, առաւելագոյն պայծառութեամբ և փառօք կատարել զծոն տարւոյս յութերորդ աւուր մերձակայ ամսեանն Յունիսի, և ազօթս առնել վասն որբոյ եկեղեցւոյն մերոյ՝ զի անսասան պահեսցէ զնա Տէք, վասն Մէծի և Մայր Աթոռոյս՝ զի անշարժ մնասցէ և պայծառ, վասն որբազան Հայրապետիս մերոյ և վասն ամենայն պաշտօնէից եկեղեցւոյ՝ զի զօրացուսցէ Տէք զամենեսին, վասն հաւատացեալ ժողովրդոց՝ զի օրհնեսցին միշտ ի Տեառնէ, վասն ամենայն աշխարհի՝ զի յաջողութեամբ և խաղաղութեամբ երջանկասցի։ Եւ մեք ամեներին, սիրելիք, որդիք լուսոյ Լուսաւորչին մերոյ, և ևս միաբան վասն ճշմարիտ և սուրբ հաւատոյն մերոյ դՏէք աղաչեսցուք և առասցուք ամենեքեան միաբանութեամբ։ Թագաւոր Երկնաւոր զեկեղեցի քո անշարժ պահեա՛ և զերկրպագուս անուանդ քո սրահեա՛ և խաղաղութեան։ Եղիցի և եղիցի։

— Հաւատար մըցանակ Սմբատ ծ. վ.ի և Խաչիկ էֆ. Աեւսնեանի. — Յովաէփ Խղմիրեանց դրական Յանձնաժողովն ոյսոր Ղալաթիոյ խորհրդարանին մէջ իր հանդիսաւոր նիստն ըրանախագահութեամբ ու պատրիարքին և մասնակցութեամբ եկեղեցական, վարչական, կրթական և գրական մարմնոց ներկայացուցիչներուն, որք ամէն տարիէ աւելի բազմութեամբ եկած էին այս անդամ։ Նիստերուն մէջ կային Յակոբ էֆ., Պօյաճեան՝ ըողոքականաց աղգապետը, ըրոֆ. Յակոբոս էֆ. ձէճիղեան և Հ. Մէնէլիշեան վրդ.։ Կանաչ սեղանին շուրջը բազմած էին անդամք Յանձնաժողովոյն։ Տ. Մկրեան Հայրը կարդաց տեղեկագերը։ Յիշեցուց թէ մըցանակաբաշխութեան 15-րդ հանդէսն է

սա: Այս հանգեսը կատարուեցաւ ամէն տարի, մինչև 13-րդ տարին. և 1901-ին երկամեայի վերածնուեցաւ որպէս զի մինչև 120 լիրայի Ա. մըցանակ կարենայ առուիլ: Ահաւասիկ ներկայացուած աշխատութիւնք, Յանձնաժողովոյ ձեռնքն հասնելուն թուականին կարգովը:

1. Ներսէս Լամբըռնացի, գրեց Սմբատ Ժ. կ. Սանատէ-թեան, առաջնորդ Շապին Գարահիսարի, իբրև աւարտաճառ 1896-ին, բայց մատենագրական, կենսագրական, վարդապետական խնամեալ տեսութեամբ: 380 էջ:

2. Ազարէգեան Էֆ. կ. դործը Կիլիկիոյ եկեղեցւոյն և իր հօտին վրայ, իբրև շարունակութիւն իր ուսումնասիրութեան: 652 էջ:

3. Քննական պատմ. ԺԹ. դարու մատենագրութեան, գրեց Միհրան Էֆ. Յովհաննէսիան: Տպեալ 1901. 124 էջ:

4. Պուլանըս, գրեց Բ. Ա. Ռուսահայ մատենագիր: Տպա-գրեալ 1901. 291 փոքր էջ:

5. Հին օրեր, Պուէտ Խաչատուր Միսաքեան, գրեց Յ. Մըր-մըրեան Էֆ. 108 էջ:

6. Թեմական գլորանոցներու ծրագիրը: 1902-ին տպուած, գրեց ըժ. Շահնազարեանց:

6. Ազթամար և իւր կաթուղիկոսութիւն, գրեց Խաչա-տուր Էֆ. Կեւոնեան 513 երես:

8. Ծովքի կաթուղիկոսարանը. Բարգէն Ժ. կ. 1903-ին տպուած, 88 փոքր էջ:

9. Աշակերտին սիրտը մշակելու միջոցները Համբ. Պէրպէ-րեան. 141 էջ:

10. Նախախնամութեան մատը: Վ. Էպ, տպ. 1902. Ա. Ա-թունեան էֆ:

Յանձնաժողովը նկատեց, որ բարերարին սահմանած նիւթերէն գուրս են Տքդ. Շահնազարեանցի գպրոցական ծրա-գիրը. Համբ. Պէրպէրեանի մանկավարժականը, որ սակայն ար-ժանի է նպաստից Յանձնաժողովէն օդնութեան մը և Արշակ-էֆ. Ալթունեանի Պօլսոյ կեանքէն վէպը: Արդէն վէպը յատկա-էֆ. Ալթունեանի Պօլսոյ կեանքէն վէպը: Արդէն վէպը յատկա-էֆ. Պուրս թողուած է սոյն մըցանակաբաշխութեան ծրագրէն:

Նկատելի է նաև, որ գործ մը գոնէ 100 երես 10 քունթօ տպագիրի տարածութիւնն ունենայ, լրագրական յօդուածի մը սահմանէն գուրս ելած ըլլալու համար, և այն տեսութեան անընդունելի էին Մըրմըրեան Էֆ. կ. Բարգէն վ. ի գրածները, որը արդէն աւելի ընդարձակ աշխատութեան մէկ կտորն ըլլալ կկարծուին և Յանձնաժողովը կուզէ ամբողջութիւնը տեսնել:

Ուստի հինգ գործ միայն յանձնուեցան քննիչներուն։ Ա. — Աէթէռս էֆ. Պէրսէրեան դնահատելի դժուծ է Ամբառժ. վ.ի յօրինած գեղեցիկ յիշատակաբանն Հայ. եկեղեցւոյ ամենէն նշանաւոր դէմքերէն միոյն համար։ Ամբառ վ. հերքած է և ամբառնացին վերադրուած է յունաէր և լատինամիտ կարծիքները և անոր ուզգափառութիւնն անպացուցած է. դրուածին ոճն ալ յոյժ կանոնաւոր է։

Բ. — Դէռդ էֆ. Առլանեան Աղաբէդեան էֆ.ի գործը գիտական չի գաներ, անձնական պրապում, օտար հեղինակներու հետազօտում, նա մանաւանդ յոյն և արարացի հեղինակներէ լուսաբանութիւն չի տեսնէր անոր մէջ, թէւ կը գովէ հեղինակին եկեղեցասիրութիւնը։

Գ. — Հ. Գալէմքարեան վրդ. թերի կը գտնէ Յովհաննէսէսեան ուսունասիրութիւնը, աղքեւըները պակաս, շատ մը հեղինակութիւններ ուշագրութենէ վրեպած, և միայն տաղաջափութեան կարը լաւ գրուած կլիկայէ։

Դ. — Մ. Նաթանեան էֆ. Պուլանըսի վրայ գրուածը թերի կը գտնէ այլ և այլ էական նկատմամբք, բայց ժողովրդին ընտանեկան կեանքը լաւ պատկերացուցած ըլլալը կիլայէ, միայն թէ յիշուած սովորոյթք միայն Պուլանըսի չեն վերաբերեր, այլ բոլոր գրացի գաւառներուն։

Ե. — Հրանտ էֆ. Առատուր խնամեալ տեղեկագրով մը ձեռքնհասօրէն ուսումնասիրած է Խաչի և եռնեանի գործը։ Իր տուած տեղեկագիրն այսպէս կամփոփէ Հ. Մկրեան։

Զ. Խաչատուր Վեռնեանի «Աղթամար և իւր կաթողիկոսութիւնը» գործին քննիչը խղճամիտ զննակեաց բովէն անցուցած է բաւական ստուար սոյն հատորը։ Գործը, քննիչին դատողութեամբ, նոր է, ովովհետեւ ինչ որ նախընթացաբար գըրուած կամ տպուած է այդ մասին, անկատար և կցկառուր է բոլորովին։ Նեղինակն իր հիմք դրած է կիզակարծ հաւաքարանի մը վրայ, և այս ըեմն զինքը գթեցնելու ծառայած է։ ունի զանցառութիւններ և կամաւոր փոփոխութիւններ և կարծիքներ, որը չեն արդարանար, բայց այսու ամենայնիւ այդ ուսումնասիրութիւնը մեծ առաւելութիւններ կը ներկայացնէ աշխատութեան վերջը գրած ցանկերը բոլոր հետաքրքրական տեղեկութիւններ են։ Գրողը ապրած է այն միջավայրին մէջ՝ ուսուն պատմութիւնը կգըէ, մօտէն ճանչցած է գիւղերն ու վանքերը, զորս կնկարագրէ, անձամք քննած է, ինչպէս կընէ ինք, շատ մը եկեղեցիներու արձանագրութիւններ, գերեզմանաքարեր, խաչքարեր, ձեռագրներու յիշատակաբաններ, ղորս

վկայութեան կլուշէ, հաւաքած է աւանդութիւններ, և իր գըուածքին մէջ կը զգացուի այն վստահութիւնը, զոր մարդունի, երբ կդրէ կամ կխօսի իր քաջ ճանչցած և խնամով ուսումնասիրած իրերուն ու գէպքերուն վրայ: Ի՞նչ ալ ըլլան իր թերութիւնները, անուբանալի է, թէ մեր եկեղեցական պատմութիւնը ճոխացնող նոր տարրեր երեան կը հանէ և ասիկամեծ արժանիք մ'է:

Յանձնաժողովը կցաւի, որ 120 լիրայի մրցանակին ամբողջութեան արժանի գրական խոշոր երկեր չեն մատուցուիր: Բայց կանոնագիրը կներէ Բ. և Գ. մրցանակներ տալ: Ուստի յարգոյ քննիչներու եզրակացութիւնըն ի նկատ առնելով, հաւասարապէս գովելի գտաւ թէ Սմբատ ծ. վ.ին աշխատութիւնը, իբրև կոկիկ գեղեցիկ գրուած մը նշանաւոր հայ եպիսկոպոսի մը կետնաբին ու գործին վրայ և թէ Խաչիկ էֆ Լեռնանի աշխատութիւնը՝ իր պարունակած նոր և անտիպ ծանօթութեանց համար, որով կուգայ ճոխացնել Հայ: Եկեղեցական պատմութիւնը:

Ուստի թէ միայն և թէ միւսոյն կուտայ ՅՅ-ական լիրա մրցանակ, և քսան լիրա Գ. մրցանակ մ'ալ կուտայ Պուլանըիսի վրայ գըուածին:

—Եսուսաղէմէ կգըեն.—Միաբ. ընդէ, ժողովը գումարուեցաւ Պատրիարքարանի մեծ գահլիճին մէջ, ընդ Նախագահութեամբ Ամեն. Տ. Յարութիւն ո. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Տ. Եղիշէ վրդ. Զիւլնիկերեանի, որ յայտարարեց թէ Ա. Աթոռոյ Եկեղեցական անդամոց համագումարն է վաթսուն և չորս, որով իսկական մեծամասնութիւնը կըլլայ երեսուն և երեք: Երուսաղէմի մէջ ներկայ գանուող Եկեղեցական անդամոց թիւն է քառասուն և երկու՝ որ արդէն ներկայ է ժողովոյ մէջ, որով օրինական մեծամասնութիւնը կըլլայ քսան և երկու՝ որ տասիրութեամբն ու գործունէութեամբը կիմամէ հոն խմբուած 20-ի չափ մանր տղաները, և գործ կդնէ հնարաւոր նորոգութիւնները: Ասկայն կարիքը խիստ մեծ է և անհրաժեշտ է նիւթական միջոց: Պատր. Փոխանորդ հայրը այդ վանքն իր մասնաւոր խնամոց առարկաց ըրած է, Աշտիշատի մէջ հանդող մեծանուն վաստակաւոր Հայրապետին առընթեր և զըացի գըտնուելուն համար: Մինչև հիմայ թէ նիւթապէս և թէ բարոյապէս օգնած է Մատնավանքին, ու զելով աւելին ընել, անձամբ այցելեց այդ սրբավայրը, իր մօտ հրաւիրեց թեմականները, անոնց հետ մի առ մի աչքէ անցուց հաշիւները և նորոգութեան կարօտ աեղերը, վերահասու եղաւ, որ վանքին պարիս-

պը, հոյակապ զանգակատան պատուանդը, առաջնորդարանը, եկեղեցին քիւերն անմիջապէս նորոգութեան պէտք ունին: Ներկաներու հետ խորհրդակցութեամբ որոշեց, որ վանքի թեւմական եղող դիւղերու մէջ հանգանակութիւն մը կատարուի, որուն ցուցակն ալ պատրաստուելով յանձնուեցաւ վանահայրական փոխանորդին, որ շուտով գործին ձեռնարկէ: Մշոյ մէջ ալ այդ նպատակով հանդանակութիւն մը պիտի կատարուի:



Ե Ղ Ի Շ Է

(Նարունակութիւն).

Պիտի գիտել տանք նախ որ նախընթաց տան թարգմանութիւնը պարզ խուսափողական է, նոյն բառը (գոյացութիւն) թէ բնազրին և թէ թարգմանութեան մէջ միանդամայն երենալով անայլայլ, որով խօսքը կը մնայ դարձեալ մի և նոյն շփոթութեան մէջ: Երկրորդ՝ որ այս կետաղբութիւնը և մեկնողական գծերը որովք կը ներկայացուին այս համարները այս ամենը, կը ներկայացնար և քմածին են և համարն գոյութիւն չունենան, ինչպէս յայտնի է բանասիրաց: Նա մանաւանդ յայտնի ապացոյց ալ չունինք որ երկրորդ համարը հակառակորդին ընծայուի, ուր հակառակն ալ միապէս ճիշդ և ողաշտպանելի է:

Ուստի, և մինչեւ որ հարազատ ընթերցուած մը մէջ տեղ երենայ ամեն տարակոյս բառնալու, մենք կը կարծենք եթէ միացնելու է այս երկու համարները և մի այլ իմաստով ըմբռանելու է խօսքը, զօր: